RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1 եռամսյակ 2023

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2023 թ. 1-ին եռամսյակում Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է գրեթե **70 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **37,5 մլրդ ՀՀ դրամով** կամ ավելի քան **2 անգամ** ավել է քան 2022 թվականի նույն ժամանակահատվածում գրանցած արդյունքը:

- 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում, բոլոր ՀՀ բանկերը եղել են շահութաբեր:

- Եթե նման շահութաբերության մակարդակը պահպանվի, նաև հաջորդ եռամսյակներում, ապա սույն թվականի շահութաբերության մակարդակը կլինի գրեթե այնքան ինչքան եղել է ռեկորդային 2022 թվականին:



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում աճել են ընդամենը **0.7%**-ով:

- Առ **31.03.2023**, ընդհանուր ակտիվները կազմել են **8.456 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.03.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **57.1%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.9%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.4%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.23



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում աճել է **3.4%**-ով:
- Առ **31.03.2023** ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.314 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **51%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Վարկային պորտֆելի դինամիկան - 1-եռ 2023 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.1%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **42.2%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **18.2%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.23



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում գրեթե չեն փոփոխվել, աճելով ընդամենը **0.1%-ով**:

- Առ **31.03.2023**, ընդհանուր պարտավորությունները կազմել են **7.084 մլրդ ՀՀ**:

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 31.03.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում գրեթե չեն փոփոխվել, նվազելով ընդամենը **0.4%-ով:**
- Առ **31.03.2023**, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **5.020 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **71%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- 31.03.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում **12 մլրդ ՀՀ դրամով,** կամ **3.4%**-ով:

- Առ **31.03.2023**, բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը կազմում է շուրջ **357 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.03.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **56 մլրդ ՀՀ դրամով**, կամ **4.2%** ու կազմել **1.371 մլրդ ՀՀ դրամ**:



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.03.2023թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **53%**-ը և հավասար է **733 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.03.2023թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **46**%-ը և հավասար է **626 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.03.2023թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **1%**-ը և հավասար են **12 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.03.2023



Կուտակված շահույթ (վնաս)

- 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **50 մլրդ ՀՀ դրամով**, կամ **8.7%**, կազմելով **626 մլրդ ՀՀ դրամ**:
- 2023 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **4** բանկ՝ ընդհանուր գումարով **20 մլրդ ՀՀ դրամ**

1. *Ամերիաբանկ* – ***17.7 մլրդ ՀՀ դրամ,***
2. *Էվոկաբանկ* – ***2 մլրդ ՀՀ դրամ,***
3. ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – ***219 մլն ՀՀ դրամ***
4. Արդշինբանկ – ***39 մլն ՀՀ դրամ,***

Կուտակված շահույթ (վնաս), ներ. գլխավոր պահուստ - *31.03.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)*



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am